ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ 1, հեռ.՝ (060) 536-402

«ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ԱՇՈՏ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ
ՀՎՀՀ 02261135

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի Ա. Մուրադյան

Աբովյանի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և «ՊՐՈ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև 23.07.2025 թվականին կնքվել է «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/69-1» ծածկագրով ապրանքի մատուցման պայմանագիր, ինչպես նաև 24.09.2025 թվականին կից համաձայնագիր, համաձայն որի Պայմանագրի հավելված N 2-ով նախատեսված ապրանքների մատակարարման վերջնաժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով մինչև 20.10.2025թ.-ը ներառյալ:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշման Հավելված N1-ի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները՝ Աբովյանի համայնքապետարանի և «ՊՐՈ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/69-1» ծածկագրով կնքված Պայմանագրի 2.1.2 կետ-ի «բ» ենթակետով՝ «ՊՐՈ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից մատակարարված թվով 58 հատ աղբամանները Աբովյանի համայնքապետարանի կողմից չեն ընդունվել՝ «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/69-1» ծածկագրով կնքված պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմքով, մասնավորապես.

- Աղբարկղերը չունեն տեխնիկական բնութագրով նախատեսված բռնակներ,
- Բացակայում են աղբարկղերի կափարիչները աղբատար մեքենաների կողմից դատարկվելու ժամանակ անշարժ ֆիքսելու համար անհրաժեշտ խողովակները,
- Աղբարկղերի կողային հատվածները ուռացրած են և աղբատար մեքենաների կողմից դրանց դատարկումը տեխնիկապես հնարավոր չէ,
- Աղբարկղերի դիմային հատվածում ամրության համար նախատեսված մետաղյա ձողերը եռակցված են սխալ հատվածում և չեն կարող ապահովել աղբարկղերի ամրությունը,
- Աղբարկղերի կափարիչները փակվում են անհամաչափ և 7-10 սանտիմետրի չափով բաց է մնում կափարիչի և աղբարկղի միջև,
- Բնութագրով և գծագրով կափարիչի ամրացումը նախատեսված է պտուտակների միջոցով, որը հնարավորություն կտար անհրաժեշտության դեպքում քանդել և նորոգել կափարիչը և ոտիկի մեխանիզմը, սակայն

մատակարարված աղբարկղերի կափարիչներն ամրացված են եռակցման միջոցով,

- Աղբարկղերը տաք ամբողջությամբ ցինկապատ չեն:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարել իր պարտականությունները»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Ելնելով վերոգրյալից՝ Աբովյանի համայքնապետարանի և «ՊՐՈ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 23.07.2025 թվականին «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/69-1» ծածկագրով կնքված Պայմանագիրի 2.1.7 կետի հիմման վրա միակողմանի լուծվում է Պատվիրատուի կողմից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր (համաձայնագիր) կնքելու իրավունքից: Ընդ որում սույն կետում նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և ավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն

ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքում որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշման Հավելված N1-ի 32-րդ կետի 16-րդ ենթակետը՝ Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը կներկայացվի լիազոր մարմին՝ «ՊՐՈ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած որակավորման ապահովում 4 680 000 /չորս միլիոն վեց հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ և պայմանագրի ապահովում 3 120 000 /երեք միլիոն մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ միակողմանի հաստատված հայտարարության երաշխիքի ձևով կներկայացվեն մատակարարին սպասարկող բանկ՝ գումարները գանձելու նպատակով:

Ընդունել ի գիտություն.

Եթե «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետերով նախատեսված լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին և եթե մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվում է լիազորված մարմին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. Բաբայան

30.12.2025թ.